ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

09.12.2023թ.-ին գումարվել է դպրոցի կոլեգիալ կառավարման խորհրդի նիստ:

Նիստին մասնակցում էին խորհրդի 9 անդամներից 5-ը, 4-ը բացակայում էին հարգելի պատճառով: Նիստին ներկա էին դպրոցի գլխ.հաշվապահ Գ.Մարտիրոսյանը, ՄԿԱ ԵՎ.Բարսեղյանը և ֆինանսատնտեսական մասով փոխտնօրեն Ս.Խաչատրյանը:

Օրակարգում.

1. Ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի արդյունքների մասին: Նոր մրցույթի /ֆիզկուլտուրա, տեխնոլոգիա, դասվար/ հայտարարության և կազմակերպման մասին:

/Զեկ՝. Եվ.Բարսեղյան/

2. Կամավոր ատեստավորված և վերապատրաստում անցած ուսուցիչների ֆինանսական փոխանցումների և ֆինբարձրացման մասին: Միջին մասնագիտական կրթությամբ 3 ուսուցիչների աշխատանքից ազատման մասին:

/ Զեկ՝.Գ.Մարտիրոսյան/

3. Դպրոցի ֆինանսատնտեսական եռամսյակային միջանկյալ հաշվետու ժամանակաշրջանի վերաբերյալ հաշվետվության քննարկում: 2023թ. սուբսիդիայի տարեկան չափաքանակի ֆինանսավորման մասին:

/ Զեկ՝.Գ.Մարտիրոսյան/

4. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության ուղարկած 07.12.2023թ. էլ.գրությունը, ըստ որի ուղարկվում է ԿԳՄՍ 07.12.2022թ.-ի N 79-Ն հրամանով հաստատված գործակիցներին և նորմատիվներին համապատասխան կազմված հաստիքացուցակը:

/Զեկ՝. Ս.խաչատրյան/

5. Սեպտեմբեր-հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին դպրոցում անցկացված ՆԴՎ պլանի համաձայն մ/մ –ում ամփոփված արդյունքների ներկայացում:

/Զեկ՝. Եվ.Բարսեղյան/

6. Լիազոր մարմնի հանձնարարությունների կատարման և դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման խնդիրների, միջոցառումների, բաց դասերի, դասալսումների, խմբակների մասին: Ամանորյա միջոցառումների,նախասրահի, դպրոցի տոնածառի ձևավորման , ինչպես նաև դասարանների տոնական տեսք տալու նախապատրաստման աշխատանքների մասին:

/Զեկ՝. Եվ.Բարսեղյան/

Լսեցին. 1-6 օրակարգի հարցերը:

Որոշեցին հավանության արժանացնել 1-6 օրակարգի հարցերի շուրջ դպրոցի կողմից ներկայացված որոշումները և խնդիրների լուծումները:

Կցվում են զեկուցումները և արձանագրվում խորհդի արձանագրությունների մատյանում:

Խորհրդի նախագահ՝ /Մ.Մարգսյան/

Քարտուղար՝ /Եվ.Բարսեղյան/